3) մարդատար վերելակ՝ 40 տեղ (2 հատ), 13,280 կգ ընդհանուր քաշով, 98,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,000 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-060-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 24-ի N 3.8-1/922-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 31-ի N ՎՄ/3-4/903-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա և 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-098-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիէս օիլ քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2014 թվականի հունվարի 17-ին կնքված՝ N 17/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի և դիզելային վառելանյութի ձեռքբերում՝ 12,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-061-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1**
**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 4-ի N 3/3.8-1/1344-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1301-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա և 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-098-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆլեքսիբլ ափլիքեյշնս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02708088) 2013 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ Ծ-2013/12-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային ընդհանուր սպասարկման ծառայությունների մատուցում՝ 2,160,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-062-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-042-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 31-ի N 3.8-1/1108-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1200-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Գյումրի, Մովսես Խորենացու 19, ՀՎՀՀ՝ 05531591) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Շիրակ» բժշկական ծառայություններ» ծրագրի մասին» N Մ-042-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-101-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի հունվարի 17-ին կնքված՝ N 410017049/488 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014-2015 թվականների ընթացքում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ տարեկան 350,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ N 02204061492 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014-2015 թվականների ընթացքում բնական գազի մատակարարում՝ տարեկան 1,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.



3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի հունվարի 8-ին կնքված՝ N 120648 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014-2015 թվականների ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ տարեկան 550,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531223) 2010 թվականի հունվարի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014-2015 թվականների ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ տարեկան 95,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-063-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի N Մ-917-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 21-ի N 3.8-1/592-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 24-ի N ՎՄ/3-4/722-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Գյումրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-917-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1136-Ա որոշման խմբագրությամբ) իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էլիպս Ջիէյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00067177) 2013 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված՝ N 1TM/FUBG պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հակահրդեհային համակարգի սարքավորումների մատակարարման, տեղադրման և կարգավորման աշխատանքների իրականացում՝ 5,230,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-064-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 24-ի N 3.8-1/921-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 31-ի N ՎՄ/3-4/904-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2014 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՐԻԱԿ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02201688) 2014 թվականի հունվարի 15-ին կնքված՝ N 15012014-01/YSSP-13-29_ma պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քիմիական նյութերի ձեռքբերում՝ 106,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-065-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 7-ի N 3/3.8-1/1607-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1258-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2014 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեղիսար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02555635) 2014 թվականի հունվարի 30-ին կնքված՝ N 30012014-01/YSSP-13-10_ԵԳԱԾ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լաբորատոր սարքավորումների ձեռքբերում՝ 296,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-066-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2

**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 7-ի N 3/3.8-1/1608-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1272-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2014 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-647-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01232586) 2014 թվականի հունվարի 30-ին կնքված՝ N 30012014-02/YSSP-13-10_ԵԳԱԾ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լաբորատոր սարքավորումների և պարագաների ձեռքբերում՝ 354,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-067-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 31-ի N 3.8-1/1113-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 6-ի N ՎՄ/3-4/1160-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա և 2014 թվականի հունվարի 23-ի N Մ-001-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սոֆթ թայմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02608299) 2013 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված՝ N 2712-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային ծրագրի արտոնագրի ձեռքբերում՝ 157,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-068-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 31-ի N 3.8-1/1142-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 6-ի N ՎՄ/3-4/1159-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա և 2014 թվականի հունվարի 23-ի N Մ-001-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռեդ-Փունթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2013 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2,500 ծրարի և 10,000 բացիկի ձեռքբերում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                            Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-069-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 29-ի N 3.8-1/958-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 1-ի N ՎՄ/3-4/947-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Չոհրաբյան և գործընկերներ» փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02225918) 2013 թվականի հունվարի 10-ին կնքված՝ N 02-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում փաստաբանական ծառայությունների մատուցում՝ 13,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-070-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 29-ի N 3.8-1/957-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 1-ի N ՎՄ/3-4/949-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմենիան դեյթաքոմ քամփնի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930093) 2012 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N IG-1470 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում համակարգչային կապի ծառայությունների մատուցում՝ 11,880,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-071-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 3

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 29-ի N 3.8-1/959-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 1-ի N ՎՄ/3-4/948-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2011 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N 098/01/08/2011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում համակարգչային կապի ծառայությունների մատուցում՝ 14,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-072-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 4**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 31-ի N 3.8-1/1109-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1198-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քլինլայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01847941) 2013 թվականի հունիսի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենտրոնի տարածքում մաքրարարական աշխատանքների իրականացում՝ 13.800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-073-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 21-ի N 3.8-1/599-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 24-ի N ՎՄ/3-4/723-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված միջոցառումների իրականացման ժամկետները երկարաձգել մինչև 2014 թվականի դեկտեմբերի 30-ը:

2. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սելենա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00803229) 2013 թվականի նոյեմբերի 7-ին կնքված՝ N 15-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղապլաստե պատուհանների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,137,976 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-074-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N Մ-672-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 31-ի N 3.8-1/1112-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1204-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի 2014 թվականի հունվարի 29-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (N 1)» N Մ-672-Ա որոշման 1-ին կետում «5,765,400 դրամի չափով» բառերը փոխարինել «11,432,900 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-075-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N Մ-1049-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 21-ի N 3.8-1/598-14 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 24-ի N ՎՄ/3-4/730-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-867-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-1049-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «2008 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված՝ N 390621 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է» բառերը փոխարինել «2008 թվականի մայիսի 14-ին կնքված՝ N 10148, սեպտեմբերի 1-ին կնքված՝ N 000869, հոկտեմբերի 17-ին կնքված՝ N 390621 և 2012 թվականի մայիսի 16-ին կնքված N 000137 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-076-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՓՅՈՒՆԻԿ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 12-ի N 3/3.8-2/1981-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 12-ի N 02/787-14, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի փետրվարի 10-ի N 1/06/138-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1416-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 47,060,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի մարզադաշտի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված մարզադաշտի արհեստական խոտածածկը (11 տեղ, 4,447.6 կգ ընդհանուր քաշով, 27,836.99 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 741,680 դրամ, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ջեյթուն կահույքի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2014 թվականի փետրվարի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղադաշտի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 29,133,520 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Սպորտ կոնցեպտ» ՍՊԸ-ի հետ (Խորվաթիայի Հանրապետություն, քաղ. Զագրեբ, Ռավինցե 5) 2013 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված՝ N 01-09/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղադաշտի արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1,738.01 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

4. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ

Ռ. Հայրապետյանի կողմից

« 03 » փետրվարի 2014թ.

## «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի մարզադաշտի՝ վերակառուցում»
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի մարզադաշտի վերակառուցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միություն - ՈՒԵՖԱ (Շվեյցարիա, 1260 Նիոն Ժննի փողոց 46) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Եր¨ան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Երևանի Կիլիկիա մարզական ավանում՝ սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 47,060,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Փյունիկ» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպություն (ՀՀ, քաղ. Երևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 29/1, ՀՎՀՀ՝ 02562579) |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013 թվականի նոյեմբերի 3-ից մինչև 2014 թվականի հոկտեմբերի 30-ը: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Խաղադաշտի հիմքի նախապատրաստման հողային աշխատանքների իրականա-ցում՝ գրունտի մշակում, դրենաժային համակարգի անցկացում, եզրաքարերի խրա-մուղու փորում, անկողնակային շերտի պատրաստում, բետոնե եզրաքարերի տեղադրում, ցանկապատի մոնտաժում, հենապատի կառուցում՝ շուրջ 30,000,000 դրամ, սկիզբը՝ 03.02.2014 թ. - ավարտը՝ 30.10.2014թ.,<br>2. Արհեստական խոտածածկի ներմուծում և տեղադրում՝ 17.060,000 դրամ, սկիզբը 03.11.2013թ.– ավարտը՝ 30.10.2014թ.: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. . Խաղադաշտի հիմքի նախապատրաստման հողային աշխատանքների իրականա-ցում՝ գրունտի մշակում, դրենաժային համակարգի անցկացում, եզրաքարերի խրամուղու փորում, անկողնակային շերտի պատրաստում, բետոնե եզրաքարերի տեղադրում, ցանկապատի մոնտաժում, հենապատի կառուցում՝ 29,133,520 դրամ<br>2. Արհեստական խոտածածկի ներմուծում՝ 27,836.99 եվրոյին համարժեք դրամ, որի փոխադրման ծախսերը կազմել են 741,680 դրամ,<br>3. Արհեստական խոտածածկի տեղադրում՝ 1,738.01 եվրոյին համարժեք դրամ,<br>4. Չնախատեսված ծախսեր՝ 918,550 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՈՒԵՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ սահմանված կարգով: |

Կազմեց՝ ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-077-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 4)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 12-ի N 3/3.8-2/1888-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 7-ի N ԴԴ/22/969-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1412-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների (37 տեղ, 9,037.98 կգ ընդհանուր քաշով, 458,587.79 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,470 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-078-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 5)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 12-ի N 3/3.8-2/1892-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 7-ի N ԴԴ/22/970-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1411-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների (30 տեղ, 3,846 կգ ընդհանուր քաշով, 117,100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8,450 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-079-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 6)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 12-ի N 3/3.8-2/1885-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 6-ի N ԴԴ/22/965-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1410-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղի (մեկ տեղ, 7,8 կգ ընդհանուր քաշով, 5 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-080-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 31-ի N 3.8-2/1137-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հունվարի 5-ի N ՖԲ/ԱնՄ-4/543-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի փետրվարի 1-ի N 04/07-1/913-14, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության 2014 թվականի փետրվարի 3-ի N 02/15/190-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1203-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության հասցեով ուղարկված բեռի (210 տեղ, 4,104 կգ ընդհանուր քաշով, 74,130 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 6,249 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման (ցանկը կցվում է) ծրագիրը:

2. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

* 02508251 *

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**AGBU**

ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության հասցեով
Միացյալ Հայկական Հիմնադրամի միջոցով ստացված
բեռի բաշխման ցուցակ

ԱՌ-2/6.4

| Կազմակերպության անվանումը | Ապրանքների նկարագիրը | Քանակը | Չափի միավորը | արժեքը ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|
| «Հայ Ժողովրդավարական ֆորում» ՀԿ | Անկողնու պարագաներ | 4 | արկղ | 1 007 |
| | Գեղարվեստական գրքեր և դասագրքեր | 4 | | 800 |
| | Մանկական հագուստ | 9 | | 2 974 |
| | Կանացի հագուստ (շապիկ, վերնաշապիկ, տաբատ, կիսաշրջազգեստ, բաճկոն) | 16 | | 6 290 |
| | Կանացի պայուսակներ և ակնետառեր | 2 | | 458 |
| | Տղամարդու հագուստ (շապիկ, վերնաշապիկ, տաբատ, բաճկոն) | 13 | | 5 045 |
| | Պատանիների հագուստ Կանացի հագուստ (շապիկ, վերնաշապիկ, տաբատ, կիսաշրջազգեստ, բաճկոն) | 7 | | 2 444 |
| «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ | Անկողնու պարագաներ | 11 | արկղ | 2 768 |
| | Գեղարվեստական գրքեր և դասագրքեր | 4 | | 800 |
| | Մանկական հագուստ | 28 | | 9 251 |
| | Կանացի հագուստ (շապիկ, վերնաշապիկ, տաբատ, կիսաշրջազգեստ, բաճկոն) | 48 | | 18 870 |
| | Կանացի պայուսակներ և ակնետառեր | 4 | | 917 |
| | Տղամարդու հագուստ (շապիկ, վերնաշապիկ, տաբատ, բաճկոն) | 40 | | 15 525 |
| | Պատանիների հագուստ Կանացի հագուստ (շապիկ, վերնաշապիկ, տաբատ, կիսաշրջազգեստ, բաճկոն) | 20 | | 6 981 |
| Ընդամենը՝ | | 210 | արկղ | 74 130 ԱՄՆ դոլար |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-081-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 12-ի N 3/3.8-2/1887-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-41413/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված ռետինե խտարարը (2 տեղ, 17.1 կգ ընդհանուր քաշով, 505.44 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա և 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-082-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-128-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 12-ի N 3/3.8-2/1884-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1414-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված բժշկական սարքավորումը (մեկ տեղ, 437 կգ ընդհանուր քաշով, 67,536 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 880.13 եվրո, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Բաղրամյան փողոցի վրա գտնվող հանրապետական հիվանդանոցի նոր մասնաշենքի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-128-Ա որոշմամբ (2012 թվականի մայիսի 18-ի N Մ-348-Ա, 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-097-Ա, օգոստոսի 9-ի N Մ-679-Ա և դեկտեմբերի 6-ի N Մ-1138-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ            Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-083-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-1111-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 12-ի N 3/3.8-2/1971-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1417-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված մարզադաշտի արհեստական խոտածածկը (32 տեղ, 14,352.4 կգ ընդհանուր քաշով, 80,408 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,393,320 դրամ, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքում ֆուտբոլի խաղադաշտի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1111-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                                Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-084-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

| 37 | Ապարանի Ավագ Դպրոց | 39 | 78 | | 577450 |
| 38 | Արագածոտնի Մարզի Վարդենիս Միջնական դպրոց | 13 | 26 | | 192483 |
| | *Ընդամենը* | ***394*** | 788 | | 5833726 |
| | | | | | 0 |
| | Շիրակ Մարզ | | | | 0 |
| 39 | Գյումրի Ակադեմիական Վարժարան (Կոլեկտիվ) | 37 | 74 | | 547837 |
| 39/1 | Գյումրի Ակադեմիական Վարժարան (Կարիկավոր ընդանիքներ) | 82 | 164 | | 1214126 |
| 40 | Վահրամաբերդի Հարություն Մկրտչյանի անվան Միջն.Դպրոց | 100 | 200 | | 1480641 |
| 41 | Գյուրու N19 Հիմնական Դպրոց | 48 | 96 | | 710708 |
| 42 | Գյուրու N38 Միջն.Դպրոց | 32 | 64 | | 473805 |
| 43 | Ֆոտոն Վարժարան | 91 | 182 | | 1347383 |
| 44 | Գյուրու N10 Հիմնական Դպրոց | 41 | 82 | | 607063 |
| 45 | Հենակետային Վարժարան | 48 | 96 | | 710708 |
| 46 | Գառնառիճի Միջն. Դպրոց | 63 | 126 | | 932804 |
| 47 | Գյումրու մշակույթի վարժարան | 38 | 76 | | 562644 |
| 48 | Գետքի Միջնակարգ Դպրոց | 55 | 110 | | 814353 |
| 49 | Պետական Ճարտարագիտական Համալսարան | 11 | 22 | | 162871 |
| 50 | Գյուրու N45 Ավագ.Դպրոց | 53 | 106 | | 784740 |
| 51 | Գյուրու N3 Ավագ.Դպրոց | 51 | 102 | | 755127 |
| 52 | Գյուրու N8 Միջն.Դպրոց | 76 | 152 | | 1125287 |
| 52/1 | Գյուրու N8 Միջն.Դպրոց | 30 | 60 | | 444192 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 53 | Շիրակ Մարզ Ազատանի Միջն. Դպրոց | 77 | 154 | | 1140094 |
| 54 | Գյուրու N27 Միջն.Դպրոց | 82 | 164 | | 1214126 |
| 55 | Գյուրու Բալատոնեավագ Դպրոց | 45 | 90 | | 666289 |
| 56 | Գյուրու N2 Ավագ.Դպրոց | 120 | 240 | | 1776769 |
| 57 | Գյուրու N23 Հիմն.Դպրոց | 92 | 184 | | 1362190 |
| 58 | Գյուրու N31 Գյումրու Գր.Լուսավորչի անվան Հիմն.Դպրոց | 44 | 88 | | 651482 |
| 59 | Կապսի Միջն.դպրոց | 25 | 50 | | 370160 |
| | *Ընդամենը* | **1341** | 2682 | | 19855398 |
| | | | | | 0 |
| | | | | | 0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | **3036** | **6144** | | 46497796 |
| 60 | COAF | | 200 | | 1480641 |
| 61 | Լոռի Մարզ Օրրան Վանաձոր | 80 | 160 | 15 | 1792013 |
| | **TOTAL** | | **6504** | 40 | 49770450 |
| | | | | | |
| | **Calculation 1 unit** | | | | |
| | Amount USD | | $118,890 | $4,000 | $122,890 |
| | Amount AMD | | 48150450 | 1620000 | 49770450 |
| | | | | | |
| | Cost 1 unit AMD | | 7403 | 40500 | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 091 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ** («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 22-ի N 3.8-2/653-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունվարի 23-ի N ԴԴ/ 22/417-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 24-ի N ՎՄ/3-4/721-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (թեստ հավաքածուներ՝ 14 տեղ, 150 կգ քաշով, 20,176.38 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,669.28 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 092 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ** («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 24-ի N 3.8-2/917-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունվարի 30-ի N ՎՊ/22/611-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 30-ի N ՎՄ/3-4/802-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռները՝ լաբորատոր ախտորոշիչ սարքավորումների ծախսանյութեր (ԱՄՆ-ից՝ 1 տեղ, 32.2 կգ քաշով, 460,89 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 333 եվրո, «Ջվարթնոց» ՄՏ և Գերմանիայից՝ 1 տեղ, 3 կգ քաշով, 1,475 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 103,6 եվրո,) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 093 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**
(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 24-ի N 3.8-2/916-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունվարի 30-ի N ՎՊ/22/610-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 30-ի N ՎՄ/3-4/803-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղեր՝ 3 տեղ, 251 կգ ընդհանուր քաշով, 11,159.91 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ փոխադրման ծախսերը կազմել են 76,827 հնդկական ռուփի, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 094 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-070-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Առաքելություն Արևելք» միջազգային օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 31-ի N 3.8-1/1111-14 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 4-ի N ՎՄ/3-4/991-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 2» ծրագրի մասին» N Մ-070-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Միկրորինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00824922) 2014 թվականի հունվարի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային տեխնիկայի գնում՝ 2,057,040 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-095 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-ի N Մ-291-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայկական կարմիր խաչի ընկերության 2014 թվականի հունվարի 23-ի N 36 գրությունը ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 31-ի N 3.8-1/1107-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 5-ի N ՎՄ/3-4/1147-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-291-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «20.04.2014թ.» բառերը փոխարինել «30.09.2014թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ի լրումն մեր 2014 թվականի փետրվարի 19-ի
N15/15.2/2284-14 ելիցի

20 փետրվարի 2014թ.
N-15/15.2/2302-14

# ՈՒ Ղ Ղ ՈՒ Մ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-096-Ա որոշման 1-ին կետում՝ «3,408 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 3,202» բառերը փոխարինել «5,408 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 3,200» բառերով:

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 096 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-774-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 29-ի N 3.8-2/978-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 29-ի N ՎՄ/3-4/792-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից ձեռք բերված բեռները (330 տեղ, 2,080.32 կգ ընդհանուր քաշով, 5,087.3 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 3,500 եվրո փոխադրման ծախսերը, 16 տեղ, 22,160 կգ ընդհանուր քաշով, 3,408 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 3,202 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը և 200 տեղ, 1,261 կգ ընդհանուր քաշով, 1,962 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 1,000 եվրո փոխադրման ծախսերը, ցանկերը կցվում են, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

2/15.21

Մ Ա Ս Ն Ա Ց Ո Ւ Ց Ա Կ

330 տեղ 2080.32 կգ. քաշով 5087.30 ԵՎՐՈ արժեքով, որից ճանապարածախսը կազմում է 3500.0 ԵՎՐՈ .

| N | Ապրանքի Անվանումը | Քանակ հատ | Տեղ | Բրուտտո կգ. | Նետտո կգ. | Արժեք ԵՎՐՈ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ջերմամեկուսիչ ապակեբամբակյա սալեր | 330 փաթեթ | 330 | 2080.32 | 1948.32 | 1587.30 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 330 | 2080.32 | 1948.32 | 1587.30 |

Բեռը մաքսազերծվելու է *Արարատյան Տ/Մ* մաքսատանը

ՄԱՍՆԱՑՈՒՑԱԿ

16 տեղ 22160.0 կգ. քաշով 5408.0 ԱՄՆ դոլար արժեքով, որից ճանապա-
րածախսը կազմում է 3200.0 ԱՄՆ դոլար

2/15.21

| N | Ապրանքի Անվանումը | Քանակ հատ | Տեղ | Բրուտտո կգ. | Նետտո կգ. | Արժեք ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գիպսե-ստվարաթղթե սալիկներ | 1920 մ2 | 16 | 22160.0 | 22080.0 | 2208.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 16 | 22160.0 | 22080.0 | 2208.0 |

200 տեղ 1261.0 կգ. քաշով 1962.0 ԵՎՐՈ արժեքով, որից ճանապա-
րածախսը կազմում է 1000.0 ԵՎՐՈ

| N | Ապրանքի Անվանումը | Քանակ հատ | Տեղ | Բրուտտո կգ. | Նետտո կգ. | Արժեք ԵՎՐՈ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ջերմամեկուսիչ ապակե-բամբակ-յա սալեր | 200 փաթեթ | 200 | 1261.0 | 1181.0 | 962.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 200 | 1261.0 | 1181.0 | 962.0 |

Բեռը մաքսազերծվելու է *Արարատյան Տ/Մ* մաքսատանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 097 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-774-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ) (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 31-ի N 3.8-2/1110-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 31-ի N ՎՄ/3-4/869-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից ձեռք բերված բեռը (3 տեղ, 365 կգ ընդհանուր քաշով, 9,170.05 եվրոյին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը 600 եվրո, ցանկը կցվում է, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Մ Ա Ս Ն Ա Ց Ո Ւ Ց Ա Կ

2/15.22

3 տեղ 365.0 կգ. քաշով 9170.05 ԵՎՐՈ արժեքով, որից ճանապարածախսը կազմում է 600.0 ԵՎՐՈ

| N | Ապրանքի Անվանումը | Քանակ հատ | Տեղ | Բրուտտո կգ. | Նետտո կգ. | Արժեք ԵՎՐՈ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Օդակարգավորիչ BINI 2W46 | 13 | 2 | 323.0 | 297.7 | 7800.0 |
| 2. | Հեռակառավարման վահանակ IR /օդակարգավորիչի համար/ | 5 | | 1.0 | 0.6 | 471.05 |
| 3. | Պլաստմասե կափարիչ, օդի եռուղի բաշխման /օդակարգավորիչի համար/ | 13 | 1 | 39.0 | 35.75 | 169.0 |
| 4. | Ջրահավաք պլաստմասե թաս /օդակարգավորիչի համար/ | 13 | | 2.0 | 1.3 | 130.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 3 | 365.0 | 335.35 | 8570.05 |

Բեռը մաքսազերծվելու է *ՄՃՓ Տ/Մ* մաքսատանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ-098-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-774-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ) (4)

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 7-ի *N 3/3.8-2/1609-14 և Հայաստանի* Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1296-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից ձեռք բերված բեռը (191 տեղ, 21718 կգ ընդհանուր քաշով, 7,487.94 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը 4,200 ԱՄՆ դոլար, ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Մ Ա Ս Ն Ա Ց Ո Ւ Ց Ա Կ

2/15.25

191 տեղ 21718.0 կգ. քաշով 7487.94 ԱՄՆ դոլար արժեքով, որից ճանապարածախսը կազմում է 4200.0 ԱՄՆ դոլար

| N | Ապրանքի Անվանումը | Քանակ հատ | Տեղ | Բրուտտո կգ. | Նետտո կգ. | Արժեք ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գիպսե-ստվարաթղթե սալիկներ | 1680 մ2 | 14 | 19503.73 | 18983.96 | 1932.0 |
| 2. | Ջերմամեկուսիչ ապակե-բամբակյա սալեր | 177 փաթեթ | 177 | 2214.27 | 2039.04 | 1355.94 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 191 | 21718.0 | 21023.0 | 3287.94 |

Բեռը մաքսազերծվելու է *Արարատյան Տ/Մ* մաքսատանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 099 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-774-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ) (3)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 10-ի N 3.8-2/1769-*14 և* Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1277-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից ձեռք բերված բեռները (5 տեղ, 1,423 կգ ընդհանուր քաշով, 56,158.19 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ 6,200 եվրո փոխադրման ծախսերը և 16 տեղ, 2,264 կգ ընդհանուր քաշով, 16,681.58 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ 5,000 ԱՄՆ դոլար փոխադրման ծախսերը, ցանկերը կցվում են, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

2/15.24

### Մ Ա Ս Ն Ա Ց Ո Ւ Ց Ա Կ

5 տեղ 1423 կգ. քաշով 56158.19 ԵՎՐՈ արժեքով, որից ճանապարածախսը կազմում է 6200.0 ԵՎՐՈ

| N | Ապրանքի Անվանումը | Քանակ հատ | Տեղ | Բրուտտո կգ. | Նետտո կգ. | Արժեք ԵՎՐՈ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ջեռ. համակ.-ի օդի մատակարարման խողովակաշարի հոսքը կարգավորող մեխանիկ.փականներ-220հտ. | 220 | 2 | 704 | 675.19 | 9501.26 |
| 2 | Հակահրդեհային խառնակարգի օդի հոսքը կարգավորող ավտոմատացված փականներ-76հատ; որից 50հատը ջերմոպատով | 76 | 3 | 719 | 661.81 | 40456.93 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 5 | 1423 | 1337 | 49958.19 |

Բեռը մարսագերծվելու է *ՄՃՓ ՏՄ* մաքսատանը

2/15.24

# Մ Ա Ս Ն Ա Ց ՈՒ Ց Ա Կ

16 տեղ 2264.0 կգ. քաշով 16681.58 ԱՄՆ դոլար արժեքով, որից ճանապա ռածախսը կազմում է 5000.0 ԱՄՆ դոլար

| N | Ապրանքի Անվանումը | Քանակ հատ | Տեղ | Բրուտտո կգ. | Նետտո կգ. | Արժեք ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Պլաստմասե խողովակներ /PVC/ | ------ | 3 | 797.95 | 737.94 | 2827.98 |
| 2. | Պլաստմասե ճկուն խողովակներ /PVC/ | ------ | 12 | 1310.95 | 1063.68 | 6216.0 |
| 3. | Պլաստմասե կցամասեր խողովակների համար | ---- | 1 | 95.1 | 85.78 | 1533.6 |
| 4. | Պլաստմասե ամրակային դետալներ խողովակների ամրացման համար | ----- | | 60.0 | 56.6 | 1104.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 16 | 2264.0 | 1944.0 | 11681.58 |

Բեռը մաքսազերծվելու է *ՄՃՓ Տ/Մ* մաքսատանը

√

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ-100-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-774-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ) (2)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 7-ի N 3/3.8-2/1606-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1199-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից ձեռք բերված բեռները (214 տեղ, 20,765 կգ ընդհանուր քաշով, 7,429 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 4,200 ԱՄՆ-ի դոլար և 16 տեղ, 4,296 կգ ընդհանուր քաշով, 22,311.09 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 4,500 ԱՄՆ-ի դոլար, ցանկերը կցվում են, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Մ Ա Ս Ն Ա Յ Ո Ւ Ց Ա Կ  2/15.23

214 տեղ 20765.0 կգ. քաշով 7429.0 ԱՄՆ դոլար արժեքով, որից ճանապարհածախսը կազմում է 4200.0 ԱՄՆ դոլար

| N | Ապրանքի Անվանումը | Քանակ հատ | Տեղ | Բրուտտո կգ. | Նետտո կգ. | Արժեք ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գիպսե-ստվարաթղթե սալիկներ | 1680 մ2 | 14 | 19504.2 | 18984.2 | 1932.0 |
| 2. | Ջերմամեկուսիչ ապակե-բամբակյա սալեր | 200 փաթեթ | 200 | 1260.8 | 1180.8 | 1297.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 214 | 20765.0 | 20165.0 | 3229.0 |

Բեռը մաքսազերծվելու է *Արարատյան Տ/Մ* մաքսատանը

# Մ Ա Ս Ն Ա Ց Ո Ւ Ց Ա Կ

16 տեղ 4296.0 կգ. քաշով 22311.09 ԱՄՆ դոլար արժեքով, որից ճանապա-
րածախսը կազմում է 4500.0 ԱՄՆ դոլար

2/15.23

| N | Ապրանքի Անվանումը | Քանակ հատ | Տեղ | Բրուտտո կգ. | Նետտո կգ. | Արժեք ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Այումինե ջերմամեկուսիչ, սենվիչ պանել | 408.6 մ2 | 9 | 3695.0 | 3661.25 | 13546.55 |
| 2 | Մետաղյա ցինկապատ պրո-ֆիլներ ռետինե ներդիրով և առանց ներդիրի | -- | 6 | 585.0 | 583.0 | 4024.54 |
| 3 | Պտուտակներ չժանգոտող մետաղից | 1200 | 1 | 16.0 | 15.75 | 240.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 16 | 4296.0 | 4260.0 | 17811.09 |

Բեռը մաքսազերծվելու է *Արարատյան Տ/Մ* մաքսատանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 101 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ-40-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(«Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի 2014 թվականի հունվարի 30-ի N 1 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 4-ի N 3/3.8-2/1343-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1293-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 12-ի «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ռուսական ուղղափառ կաթողիկե տաճարի կառուցում» ծրագրի մասին» N Մ-40-Ա որոշմամբ (2013 թվականի մարտի 15-ի N Մ-158-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝ 8-րդ և 9-րդ կետերում 3-րդ փուլով նախատեսված աշխատանքների ավարտը սահմանել 2014 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2014 թվականի N Մ - 102 - Ա
քաղ. Երևան

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՐՁԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 21-ի N 3/3.8-1/591-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունվարի 23-ի N 02/327-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հունվարի 21-ի N 04/07-1/514-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 24-ի N ՎՄ/3-4/724-14 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014 թվականի հունվարի 30-ի N 01/21.1/234-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,225,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հազարաշեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01816381) 2013 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված N ՀՀ/ՆՆ-16/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 1,125,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«15» հունվարի 2014.թ.

## «ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման նախագծում»

### ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտա-ուսուցչական կազմի գործունեության պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ Խաչարձան գյուղ, կրթության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.225.000 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Խաչարձան գյուղի բնակիչները |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ դեկտեմբերի 24 -ից մինչեւ 2014թ. հունիսի 24-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Հազարաշեն» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքների նախագծում՝ 1.125.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>Նախատեսվում է նաև նախագծի փորձաքննություն 100.000 դրամ մոտավոր արժեքով: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինե Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ - 103 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՍԵԼԱՎԱՏԱՐ ՑԱՆՑԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 23-ի N 3/3.8-1/796-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հունվարի 31-ի N 02/458-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հունվարի 24-ի N 04/07-1/625-14, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 31-ի N ՎՄ/3-4/871-14 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014 թվականի հունվարի 21-ի N 01/10.01/215-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 2,985,120 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ գյուղի միջնակարգ դպրոցի շրջակայքի սելավատար ցանցերի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՆԱԼԻԱԼ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07614658) 2013 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N ՀՀ/Տխ-01/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սելավատար ցանցերի կառուցում՝ 2,985,120 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«21» հունվարի 2014թ.

« ՀՀ Տավուշի մարզի Խաշթառակ գյուղի միջնակարգ դպրոցի շրջակայքի սելավատար ցանցերի կառուցում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել ջրահեռացումը ՀՀ Տավուշի մարզի Խաշթառակ գյուղի միջնակարգ դպրոցի տարածքից |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ, կրթության բնագավառ |

2

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 2.985.120,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Տավուշի մարզի Խաշթառակ գյուղի միջնակարգ դպրոցը |
| 7. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ դեկտեմբերի 26 -ից մինչեւ 2014թ մարտի 26-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ՆԱԼԻԱԼ» ՍՊԸ-ի կողմից սելավատար ցանցերի կառուցման աշխատանքների իրականացում՝ 2.985.120,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (ընթացիկ եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 104 -Ա**

**քաղ. Երևան**

**ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 3-ի N 3/3.8-2/1291-14, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2014 թվականի փետրվարի 10-ի N 1/01/3/10231-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1302-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայի WWF հիմնադրամի կողմից Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հասցեով ուղարկված մետաղյա ցանկապատնեշների (20 տեղ, 4720 կգ ընդհանուր քաշով, 7564 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3500 եվրո, ՄԾՓ մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Մետաղյա ցանկապատնեշներն օգտագործվելու են «Դիլիջան» ազգային պարկում ստեղծվող ազնվացեղ եղջերուներին պահելու և բազմացնելու ազատավանդակների համար:

2. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին՝ բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն հանձնելու մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2014 թվականի N Մ- 105 -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 24-ի N 3/3.8-2/886-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունվարի 24-ի N ԴԴ/22/497-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 31-ի N ՎՄ/3-4/870 -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի ՍԵՄՌԱ Պլյուս հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքը (Կալցիումի ացետատ հիդրատ, 2 տեղ, 54 կգ ընդհանուր քաշով, 2 շվ ֆրանկ արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 432 շվ ֆրանկ, ՄՓԵւՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 106 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N Մ-265-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՇՈՂԻԿ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 6-ի N 3/3.8-2/1550-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի .փետրվարի 6-ի N ՖԲ/ԱՆՄ-5/586-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1303-14, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի փետրվարի 3-ի N 01/10.1/259-14, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2014 թվականի փետրվարի 4-ի N 1/3/1-1/451-14 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014 թվականի փետրվարի 6-ի N 01/21.1/334-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 16-ի «Շողիկ» հայկական բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Հոգ Հայաստանին» ծրագրի մասին» N Մ-265-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ և 9-րդ կետերում ավելացնել «Տավուշի մարզ» բառերը.

2. Սահմանել, որ Անգլիայի «Հայկական ծառայություններ» հասարակական կազմակերպության կողմից «Շողիկ» հայկական բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (1263 տեղ, 8969 կգ ընդհանուր քաշով, 281,657.27 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 7,005 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

2/15.30

Փաթեթանյութի ցանկը/գնահատված ցանկը
Ստացողը: UNITED ARMENIAN FUND c/o
DR MICHAEL HARRISON
ARMENIAN MINISTRIES
UNIT 10, RAILWAY LANE
SUTTON BRIDGE, SPALDING, PE11 9UY (UK)
Ապրանք ստացող: «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպություն
Նոր-Արեշ, 26 փողոց, 59/1
Էրեբունի, Երևան, Հայաստան
Գևորգ Մինասյան
011-37410-43-31-34

Կոնտեյների համարը: GLDU9058386
Կոնտեյներ: 1 x 40'HC
Բեռի համարի հաշիվը: POTBSE13110138

| Քանակը | Պարունակություն | Բացատրություն | Արժեքը (ԱՄՆ$) | Քաշը (կգ) |
|---|---|---|---|---|
| 956 | Արկղեր | Հագուստներ | $241841.94 | 6819.3 |
| 159 | Արկղեր | Անկողնային պարագաներ, (սպիտակեղեն, վերմակ) | $14382.85 | 941.6 |
| 3 | Հատ | Սայլակներ | $335.00 | 40.0 |
| 31 | Արկղեր | Կոշիկներ | $8598.00 | 226.4 |
| 43 | Արկղեր | Խաղալիքներ | $7673.47 | 192.8 |
| 41 | Արկղեր | Գրենական պիտույքներ, Դպրոցական պայուսակներ | $5286.01 | 307.6 |
| 28 | Արկղեր | Սպորտային պայուսակներ | $2740.00 | 371.6 |
| 2 | Արկղեր | Բատուտ, օդի նասոս | $800.00 | 70.0 |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| 1263 | Ապրանքի ընդհանուր քանակը | Պարունակվում է մեկ (1) կոնտեյներում | $281657.27 | 8969կգ |

Մարդասիրական օգնություն Հայաստանում ապրող մարդկանց համար

«Շողիկ» ՀԲՀԿ-ի տնօրեն Գ. Մինասյան

30.01.2014թ.

Բաշխման ցանկ

| | օգտ. հագուստ (արկղ) | | հագուստ (հատ) | | գործած գլխարկներ (հատ) | | օգտ.անկողնային պարագաներ (սպիտակեղեն, վերմակ) (արկղ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արարատի մարզ Երասխի Գյուղապետարան (85) ընտ. | 30 | $7,986.60 | 1000 | $11,320.00 | 350 | $276.50 | 10 | $904.50 |
| Արարատի մարզ Լանջանիստի Գյուղապետարան (35) ընտ. | 20 | $5,324.40 | 450 | $5,094.00 | 200 | $158.00 | 8 | $723.60 |
| Արարատի մարզի Վարդաշատի Գյուղապետարան (35) ընտ. | 20 | $5,324.40 | 450 | $5,094.00 | 200 | $158.00 | 8 | $723.60 |
| ՀՀ Արագածոտնի Մարզպետարանի Սոցիալական Բաժին | 20 | $5,324.40 | 600 | $6,792.00 | 200 | $158.00 | 8 | $723.60 |
| Արագածոտնի մարզ Արտենիի Գյուղապետարան (120) ընտ. | 35 | $9,317.70 | 1800 | $20,376.00 | 500 | $395.00 | 15 | $1,356.75 |
| Արագածոտնի մարզ Կարբիի Գյուղապետարան (60) ընտ. | 25 | $6,655.50 | 1000 | $11,320.00 | 250 | $197.50 | 8 | $723.60 |
| Արարատի մարզ Դալարի Գյուղապետարան (30) ընտ. | 20 | $5,324.40 | 500 | $5,660.00 | 200 | $158.00 | 6 | $542.70 |
| Տավուշի մարզ Կոթիի Գյուղապետարան (45) ընտ. | 20 | $5,324.40 | 700 | $7,924.00 | 250 | $197.50 | 8 | $723.60 |
| Տավուշի մարզ Ոսկեվանի Գյուղապետարան (30) ընտ. | 20 | $5,324.40 | 700 | $7,924.00 | 200 | $158.00 | 8 | $723.60 |
| «Երկրապահ Կամավորներ Միություն» Սիսիանի բաժանմունք | 15 | $3,993.30 | 600 | $6,792.00 | 200 | $158.00 | 7 | $633.15 |
| ԼՂՀ ք. Շուշիում գրանցված «Հույսի Արցախ» հ/կ | 20 | $5,324.40 | 1000 | $11,320.00 | 300 | $237.00 | 6 | $542.70 |
| ՀՀ Աշխատանքի և Սոց. Հարցերի Նախարարություն | 30 | $7,986.60 | 1200 | $13,584.00 | 300 | $237.00 | 12 | $1,086.70 |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով (450) ընտ. | 60 | $15,975.64 | 2932 | $33,171.48 | 1350 | $1,066.50 | 50 | $4,522.50 |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ի ճամբարի ծրագրի համար | 6 | $1,597.32 | 100 | $1,132.00 | | | 5 | $452.25 |
| | *341* | *$90,783.46* | *13032* | *$147,503.48* | *4500* | *$3,555.00* | *159* | *$14,382.85* |

| | սայլակներ (հատ) | | կոշիկ (հատ) | | խաղալիք (արկղ) | | գրենական պիտույք (հատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արարատի մարզ Երասխի Գյուղապետարան (85) ընտ. | | | 30 | $819.55 | 2 | $356.90 | 1,200 | $312.00 |
| Արարատի մարզ Լանջանիստի Գյուղապետարան (35) ընտ. | | | 15 | $404.85 | 2 | $356.90 | 250 | $62.50 |
| Արարատի մարզի Վարդաշատի Գյուղապետարան (35) ընտ. | | | 15 | $404.85 | | | 250 | $62.50 |
| ՀՀ Արագածոտնի Մարզպետարանի Սոցիալական Բաժին | | | | | 2 | $356.90 | | |
| Արագածոտնի մարզ Արտենիի Գյուղապետարան (120) ընտ. | | | 35 | $859.16 | 5 | $892.25 | 1,500 | $390.00 |
| Արագածոտնի մարզ Կարբիի Գյուղապետարան (60) ընտ. | | | 25 | $674.75 | 3 | $535.35 | 800 | $208.00 |
| Արարատի մարզ Դալար Գյուղապետարան (30) ընտ. | | | | | 2 | $356.90 | 200 | $52.00 |
| Տավուշի մարզ Կոթիի Գյուղապետարան (45) ընտ. | | | 20 | $539.80 | 2 | $356.90 | 250 | $62.50 |
| Տավուշի մարզ Ոսկեվանի Գյուղապետարան (30) ընտ. | | | 20 | $539.80 | 2 | $356.90 | 250 | $62.50 |
| «Երկրապահ Կամավորներ Միություն» Սիսիանի բաժանմունք | | | 15 | $404.85 | | | 250 | $62.50 |
| ԼՂՀ ք. Շուշիում գրանցված «Հույսի Արցախ» հ/կ | | | 15 | $404.85 | 3 | $535.35 | 1,000 | $260.00 |
| ՀՀ Աշխատանքի և Սոց. Հարցերի Նախարարություն | | | 30 | $819.55 | | | 3,500 | $910.00 |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով (450) ընտ. | 3 | $335.00 | 101 | $2,725.99 | 5 | $892.25 | 4777 | $1,237.51 |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ի ճամբարի ծրագրի համար | | | | | 15 | $2,676.87 | 200 | $52.00 |
| | *3* | *$335.00* | *321* | *$8,598.00* | *43* | *$7,673.47* | *14,427* | *$3,734.01* |

| | դպրոցական պայուսակ (հատ) | | սպորտային պայուսակ (հատ) | | բատուտ և օդի ճասու (հատ) | |
|---|---|---|---|---|---|---|
| Արարատի մարզ Երասխի Գյուղապետարան (85) ընտ. | 20 | $185.80 | 25 | $269.75 | | |
| Արարատի մարզ Լանջանիստի Գյուղապետարան (35) ընտ. | | | 15 | $161.85 | | |
| Արարատի մարզի Վարդաշատի Գյուղապետարան (35) ընտ. | | | 15 | $161.85 | | |
| ՀՀ Արագածոտնի Մարզպետարանի Սոցիալական Բաժին | | | | | | |
| Արագածոտնի մարզ Արտենիի Գյուղապետարան (120) ընտ. | 30 | $278.70 | 40 | $431.60 | | |
| Արագածոտնի մարզ Կարբիի Գյուղապետարան (60) ընտ. | 20 | $185.80 | 35 | $377.65 | | |
| Արարատի մարզ Դալար Գյուղապետարան (30) ընտ. | | | | | | |
| Տավուշի մարզ Կոթիի Գյուղապետարան (45) ընտ. | | | 15 | $161.85 | | |
| Տավուշի մարզ Ոսկեվանի Գյուղապետարան (30) ընտ. | | | 15 | $161.85 | | |
| «Երկրապահ Կամավորներ Միություն» Սիսիանի բաժանմունք | | | | $0.00 | | |
| ԼՂՀ ք. Շուշիում գրանցված «Հույսի Արցախ» հ/կ | 20 | $185.80 | 40 | $431.60 | | |
| ՀՀ Աշխատանքի և Սոց. Հարցերի Նախարարություն | 55 | $511.52 | | | | |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով (450) ընտ. | 22 | $204.38 | 54 | $582.00 | | |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ի ճամբարի ծրագրի համար | | | | | 2 | $800.00 |
| | *167* | *$1,552.00* | *254* | *$2,740.00* | *2* | *$800.00* |

«Շողիկ» ՀԲՀԿ-ի
տնօրեն՝ Գ. Սիմոնյան /........................./

30.01.2014

2/15.30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ - 107 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 6-ի N 3/3.8-1/1571-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1262-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-607-Ա, նոյեմբերի 15-ի N Մ-1060-Ա, դեկտեմբերի 6-ի N Մ-1172-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1246-Ա և 2014 թվականի փետրվարի 14 N Մ-122 -Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 24-ի N 3.8-1/884-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 3-ի N 02/519-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 31-ի N ՎՄ/3-4/876-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 9,195,000 դրամ արժողությամբ «Էջմիածնի Հայորդաց Տան տնտեսական պայմանների բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2008 թվականի օգոստոսի 3-ին կնքված N Ա 10002082749 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բնական գազի ծառայությունների մատուցում՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված N ԿՊ0054 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052)2009 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված N 114521344 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 195,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«09» 01 2014 թ.

Էջմիածնի Հայորդաց Տան տնտեսական պայմանների բարելավման

2/7

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է բարելավել Էջմիածնի Հայորդյաց Տան սաների ուսումնակրթական պայմանները, որտեղ նրանք կրթվում և դաստիարակվում են ազգային եկեղեցական ոգով, հաղորդակից դառնում ազգային և համաշխարհային արվեստներին և արհեստներին: Հայորդյաց տանը բացահայտվում են սաների ունակություններն ու նախասիրությունները, տրվում է նախնական և մասնագիտական կրթություն, որը նպաստում է անհատի ձևավորմանը |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, ք. Էջմիածին, Իսի Լե Մուլինո 8դ/կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 9 195 000 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Էջմիածնի շրջանի 5-18 տարեկան շուրջ 650 շնորհալի երեխաները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Էջմիածնի Հայորդյաց Տունն ապահովել գազով, հեռախոսակապով և էլեկտրաէներգիայով՝ ընդհանուր 9 195 000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի, 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2014թ.:<br><br>- Գազի մատակարարում «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԲԸ Էջմիածնի ԳԳՄ-ի կողմից, պայմանագիր N10002082749՝ կնքված 03.08.2008թ., (ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Ծաղկունք, ՀՎՀՀ 00046317), 6.000.000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ,<br><br>- էլեկտրաէներգիայի մատակարարում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, պայմանագիր NԿՊ0054՝ կնքված 10.09.2013թ., (ՀՀ, ք.Երևան, Ա.Արմենակյան 127, ՀՎՀՀ 01520882), 3.000.000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ,<br><br>- Հեռախոսակապի տրամադրում «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից, պայմանագիր N114521344՝ կնքված 05.10.2009թ., (ՀՎՀՀ 02500052), 195.000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է սպառել 6.000.000 դրամի գազ, 3.000.000 դրամի էլեկտրաէներգիա և օգտագործել 195.000 դրամի հեռախոսակապ, ընդամենը 9.195.000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է վերահսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչատնտեսական և Ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

2/7

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 124 - Ա**
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՅՈՐԴԱՑ ՏԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 23-ի N 3.8-1/795-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 3-ի N 02/515-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 31-ի N ՎՄ/3-4/892-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 1,310,000 դրամ արժողությամբ «Աշտարակի Հայորդաց Տան տնտեսական պայմանների բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սոյն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Մուսալեռ» մ/6-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մայիսի 19-ին կնքված N 20029 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի ծառայությունների մատուցում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի մարտի 10-ին կնքված N 442 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 85,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի «Հյուսիս-Արևմտյան» մասնաճյուղի «Աշտարակ» տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2006 թվականի փետրվարի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարում և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 25,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սոյն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«09» 01 2014 թ.

Աշտարակի Հայորդյաց Տան տնտեսական պայմանների բարելավման

ԾՐԱԳԻՐ

2/8

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է բարելավել Աշտարակի Հայորդյաց Տան սաների ուսումնակրթական պայմանները, որտեղ նրանք կրթվում և դաստիարակվում են ազգային եկեղեցական ոգով, հաղորդակից դառնում ազգային և համաշխարհային արվեստներին և արհեստներին: Հայորդյաց տանը բացահայտվում են սաների ունակություններն ու նախասիրությունները, տրվում է նախնական և մասնագիտական կրթություն, որը նպաստում է անհատի ձևավորմանը |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, ք. Աշտարակ, Միսակյան 6/կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1 310 000 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Աշտարակ քաղաքի 5-18 տարեկան շուրջ 300 շնորհալի երեխաները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Աշտարակի Հայորդյաց Տունն ապահովել խմելու ջրով, էլեկտրաէներգիայով և հեռախոսակապով՝ 1.310.000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի, 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2014թ.:<br><br>- էլեկտրաէներգիայի մատակարարում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, «Մուսալեռ» մասնաճյուղի կողմից պայմանագիր N 20029՝ կնքված 19.05.2008 թ., (ՀՀ ք. Աշտարակ, Նարեկացու 196, ՀՎՀՀ 01520882), 1.200.000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ,<br><br>- Ջրի մատակարարում և ջրահեռացում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ «Հյուսիս-Արևմտյան» մասնաճյուղի «Աշտարակ» տեղամասի կողմից, պայմանագիր՝ կնքված 01.02.2006 թ., (ՀՀ ք.Աշտարակ, ՀՎՀՀ 02509667), 25.000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ,<br><br>- Հեռախոսակապ տրամադրում «ԱՐՄԵՆՏԵԼ» ՀՁ ՓԲԸ-ի կողմից, պայմանագիր N 442 (ք. Աշտարակ, Միսակյան 1, ՀՎՀՀ 02500052), 85.000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է սպառել 25.000 դրամի ջուր, 1.200.000 դրամի էլեկտրաէներգիա, 85.000 դրամի հեռախոսակապ, ընդամենը՝ 1.310.000 ՀՀ դրամով, առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Աշտարակի քաղաքապետարանի հետ:<br><br>2/8 |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է ադմինիստրատիվ հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տնտեսական և Ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 125 - Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՅՈՐԴԱՑ ՏԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 23-ի N 3.8-1/798-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 3-ի N 02/517-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 31-ի N ՎՄ/3-4/894-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 5,193,000 դրամ արժողությամբ «Վանաձորի Հայորդաց Տան տնտեսական պայմանների բարելավում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն ՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Դեբեդ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված N 003519 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի ծառայությունների մատուցում՝ 1,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված N 112957612 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 168,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Լոռու ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2009 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բնական գազի ծառայությունների մատուցում՝ 3,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Լոռի-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ հետ (ՀՎՀՀ՝ 06934743) 2010 թվականի մարտի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարում և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 125,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
« 09 » 01 2014 թ.

Վանաձորի Հայորդյաց Տան տնտեսական պայմանների բարելավման

# ԾՐԱԳԻՐ

2/9

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է բարելավել Վանաձորի Հայորդյաց Տան սաների ուսումնակրթական պայմանները, որտեղ նրանք կրթվում և դաստիարակվում են ազգային եկեղեցական ոգով, հաղորդակից դառնում ազգային և համաշխարհային արվեստներին և արհեստներին: Հայորդյաց տանը բացահայտվում են սաների ունակություններն ու նախասիրությունները, տրվում է նախնական և մասնագիտական կրթություն, որը նպաստում է անհատի ձևավորմանը |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, ք. Վանաձոր, Մաշտոցի 116/կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 5 193 000 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Վանաձոր քաղաքի 5-18 տարեկան մոտ 230 շնորհալի երեխաները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Վանաձորի Հայորդյաց Տունն ապահովել էլեկտրաէներգիայով, գազով, ջրով և հեռախոսակապով՝ 5.193.000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի, 01 հունվարի 2014թ. – 31 դեկտեմբերի 2014թ.:<br><br>- էլեկտրաէներգիայի մատակարարում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, «Դեբեդ» մասնաճյուղի կողմից, պայմանագիր N 003519՝ կնքված 11.12.2008 թ., (ՀՀ ք. Վանաձոր, Բաթումի 8, ՀՎՀՀ 01520882), 1.300.000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ,<br><br>- Գազի մատակարարում «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԲԸ Լոռու ԳԳՄ-ի կողմից, պայմանագիր կնքված 16.12.2009թ., (ՀՀ, ք.Վանաձոր, Չուխաջյան 2/2ա, ՀՎՀՀ 00046317), 3.600.000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ,<br><br>- Ջրի մատակարարում և ջրահեռացում «Լոռի-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից, պայմանագիր՝ կնքված 01.03.2010թ., (ՀՀ, ք.Վանաձոր, Նելսոն Ստեփանյան 2ա, ՀՎՀՀ 06934743), 125.000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ,<br><br>- Հեռախոսակապի տրամադրում «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ -ի կողմից, պայմանագիր N 112957612՝ կնքված 17.09.2008թ. (ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 18, ՀՎՀՀ 02500052), 168.000 ՀՀ դրամ արժեքով, առանց ԱԱՀ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է սպառել 1.300.000 դրամի էլեկտրաէներգիա, 3.600.000 դրամի գազ, 125.000 դրամի ջուր, 168.000 դրամի հեռախոսակապ, ընդամենը 5.193.000 ՀՀ դրամով, առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր չեն նախատեսվում 2/9 |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Վանաձորի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է ադմինիստրատիվ հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տնտեսական և Ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**17 փետրվարի 2014 թվականի N Մ- 126 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի փետրվարի 17-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող՝ 949,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Գյուղական համայնքների զարգացում» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի մանուկների հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի ու Արմավիրի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի

հոգեբարձուների խորհրդի կողմից

12 Դեկտեմբերի 2013թ.

| | | |
|---|---|---|
| | **Գ Յ Ո Ւ Ղ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ն Ե Ր Ի Զ Ա Ր Գ Ա Ց Ո Ւ Մ<br>Ծ Ր Ա Գ Ի Ր** | |
| 1 | Ծրագրի նպատակը | Զարգացնել սահմանամերձ համայնքները: Հիմնել տարատեսակ խմբակներ համայնքների երեխաների համար, օժանդակել գյուղական վայրերի կրթության որակի բարձրացմանը՝ վերապատրաստելով ուսուցիչներին, ուսանել և նպաստել առողջ ապրելակերպի վարմանը, իրականացնել երեխայի և ընտանիքի աջակցության տարաբնույթ ծրագրեր, այդ թվում հոգեբանական աջակցության և հատուկ մանկավարժական այլ օժանդակության միջոցով, խթանել շահառու համայնքների տնտեսական զարգացումը՝ ձեռնարկատիրական գործունեության բարելավման, բիզնես ծրագրերի նախագծման և համայնքային զարգացման ծրագրերի իրագործման միջոցով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագիրը բարեգործական որակելուց հետո հիմնադրամի կողմից կնքված հարակից գործարքները և ներմուծվող բեռները կստանան հնարավորություն ազատվելու ԱԱՀ-ից, ինչ և կօգնի հիմնադրամին ավելի շատ ներդրումներ կատարել համայնքներում: |
| 3 | Բարեգործը | "Children of Armenia Fund" New York, USA |
| 4 | Ծրագիր կատարողը | Հայաստանի մանուկներ հիմնադրամ, ՀՎՀՀ 02569972, ՀՀ ք. Երևան 0001, Հյուսիսային պողոտա 1, 8-րդ հարկ, 24 սենյակ: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը - բնագավառը | ՀՀ Արմավիր մարզի Քարակերտ, Հացիկ, Սարդարապատ, Դալարիկ, Լեռնագոգ, Մյասնիկյան, Գետաշեն, Արգինա, Շենիկ, Վանանդ, Բագարան, Երվանդաշատ, Բաղրամյան, Հուշակերտ, Տալվորիկ, Արտամետ, Արևադաշտ և Կողբավան համայնքները: Արագածոտն մարզի Արտենի, Արագածավան, Գետափ և Թլիկ համայնքները:<br>Բնագավառը - Բարեգործական բեռների ներմուծում և բաժանում համայնքների բնակիչներին: Կրթական, առողջապահական, սոցիալ-հոգեբանական, տնտեսական, և գյուղատնտեսական ծրագրերի իրականացում: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն 01/01/2014 - 31/12/2014 ժամանակահատվածի համար կազմում է **949.000** /Ինը հարյուր քառասունինը հազար/ ԱՄՆ դոլար: |
| 7 | Բարեգործություն ստացողը | ՀՀ Արմավիր մարզի Քարակերտ, Հացիկ, Սարդարապատ, Դալարիկ, Լեռնագոգ, Մյասնիկյան, Գետաշեն, Արգինա, Շենիկ, Վանանդ, Բագարան, Երվանդաշատ, Բաղրամյան, Հուշակերտ, Տալվորիկ, Արտամետ, Արևադաշտ և Կողբավան և Արագածոտն մարզի Արտենի, Արագածավան, Գետափ և Թլիկ համայնքների բնակիչները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01/01/2014թ. - 31/12/2014թ.: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը - ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Տնտեսական և գյուղատնտեսական ծրագիր - **133.000** ԱՄՆ դոլար<br>Կրթական ծրագիր - **254.000** ԱՄՆ դոլար<br>Առողջապահական ծրագիր - **254.000** ԱՄՆ դոլար<br>Սոցիալ-հոգեբանական ծրագիր - **128.000** ԱՄՆ դոլար<br>Կազմակերպչական ծախսեր - **180.000** ԱՄՆ դոլար: |
| 10 | Ձեռք բերվող /ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները - նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել սննդամթերք 131.000 ԱՄՆ դոլար, սանտեխնիկա, կահույք, գրասենյակային պիտույքներ, համակարգչային տեխնիկա 50.000 ԱՄՆ դոլար, ավտոմեքենաներ 30.000 ԱՄՆ դոլար: Արտերկրից բարեգործական բեռների ներմուծում 100.000 ԱՄՆ դոլար: Կազմակերպչական ծախսեր - 180.000 ԱՄՆ դոլար: |



Հ. Հեղդարյան

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսերը 01/01/2014թ. - 31/12/2014թ. ժամանակահատվածի համար կազմում են - **180.000** ԱՄՆ դոլար:<br>- Տարածքի վարձակալություն գրասենյակի համար 30.000 ԱՄՆ դոլար,<br>- Աշխատավարձ 53.000 ԱՄՆ դոլար,<br>- Վառելիք մեքենաների համար 10.000 ԱՄՆ դոլար,<br>- Գործուղումներ 5.000 ԱՄՆ դոլար,<br>- Կոմունալ վճարումներ 20.000 ԱՄՆ դոլար,<br>- Գրասենյակային գույքի ձեռք բերում 25.000 ԱՄՆ դոլար,<br>- Գրասենյակային պարագաների ձեռք բերում 2.000 ԱՄՆ դոլար,<br>- Միջոցառումների կազմակերպման համար ադմինիստրատիվ ծախսեր 35.000 ԱՄՆ դոլար: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցել ՀՀ նախարարությունների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, բանկերի և միջազգային կազմակերպությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ԱՄՆ Children of Armenia Fund հիմնադրամի, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացուցիչների և անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: |

Անուշ Եղիգարյան

Գործադիր տնօրեն

Հայաստանի մանուկներ հիմնադրամ



Հ. Հեղդարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 127 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 7-ի N 3/3.8-2/1636-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի փետրվարի 7-ի N 03/07-1/1166-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 5-ի N ԴԴ/22/875-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 7-ի N ՎՄ/3-4/1266-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված ինսուլինի (1 տեղ, 30 կգ ընդհանուր քաշով, 31,050 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 992 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Ներմուծվող ինսուլինը անհատույց հանձնվելու է «Մուրացան» հիվանդանոցային համալիրի էնդոկրինոլոգիայի կլինիկային:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռը «Մուրացան» հիվանդանոցային համալիրի էնդոկրինոլոգիայի կլինիկային հանձնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ - 128 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 30-ի N 3.8-2/1046-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 3-ի N ԴԴ/22/827-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 5-ի N ՎՄ/3-4/1149-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Փարիզի Ֆրանսահայ բժիշկների միության (UMAF) կողմից աջակցության նպատակով «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (23 տեղ, 4,040 կգ ընդհանուր քաշով, 4,700 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 6,517 եվրո, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ց ՈՒ Ց Ա Կ

2/15.6

| Հ/հ | Ապրանքի անվանումը | Քանակը | Քաշը /կգ/ | Գինը /E/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 01/23-03/23 | անեսթեզիական պարագաներ | | | |
| 01/23-03/23 | անեսթեզիայի սարքի պոլիմեր. խողովակներ | 160 | 60 | 70 |
| 01/23-03/23 | անեսթեզիայի սարքի պոլիմեր. ծայրատներ | 400 | 40 | 40 |
| 01/23-03/23 | անեսթեզիայի սարքի պոլիմեր. ֆիլտրներ | 800 | 55 | 40 |
| 01/23-03/23 | ներարկիչներ 50գ | 142 | 5 | 20 |
| 01/23-03/23 | ներարկման համակարգ | 200 | 20 | 50 |
| 01/23-03/23 | կաթետերներ | 1000 | 100 | 80 |
| 04/23 | ձեռքերը լվանալու հեղուկ օճառ անիոս | 360 | 450 | 100 |
| 05/23 | անեսթեզիայի սարք | 1 | 120 | 100 |
| 06/23 | օգտ. լապարասկոպիայի ստոյկա իր 2 մոնիտորով | 1 | 350 | 500 |
| 07/23 | օգտ. էխոգրաֆ | 1 | 250 | 500 |
| 08/23 | օգտ. կոլոնոսկոպիայի ստոյկա իր 1 մոնիտորով | 1 | 300 | 500 |
| 09/23 | լապարասկոպիայի պարագաներ | 1000 | 80 | 100 |
| 10/23 | թթվածնային կայանի յուղի հովացման մարտկոցներ | 2 | 20 | 500 |
| 11/23-16/23 18/23-22/23 | վիրաբուժական պարագաներ /տամպոններ/ 197 արկղ | 2364տ. | 1600 | 372 |
| 11/23-16/23 18/23-22/23 | միագամյա օգտագործման բժշկական հագուստներ | 364 | 240 | 728 |
| 17/23 | կոլոնոսկոպիայի սարք իր մոնիտորով | 1 | 50 | 500 |
| 23/23 | լապարասկոպիայի ստոյկա | 1 | 300 | 500 |
| Ընդամենը՝ | | | **4040** | **4700** |

Տնօրեն՝ Յ.ԹԱՄԱԶՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ - 129 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 10-ի N 3/3.8-2/1689-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 10-ի N ՎՄ/3-4/1314-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ երկկողմանի կավճապատ թուղթ (29 տեղ, 23,240 կգ ընդհանուր քաշով, 28,881.18 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 431,230 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ծիսական գրքերի տպագրության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 փետրվարի 2014 թվականի N Մ - 130 - Ա**
**քաղ. Երևան**
(որոշումն ընդունվել է 2014 թվականի փետրվարի 14-ին)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՒՋԱՆ ԳՅՈՒՂԻ «ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի փետրվարի 17-ի N 3/3.8-2/2252-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի փետրվարի 13-ի N ՎՄ/3-4/1676-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել հոլանդական Global Aid Network բարեգործական (ոչ առևտրային) կազմակերպության միջոցներով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի «Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (130 տեղ, 2300 կգ ընդհանուր քաշով, 200 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 150 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է և անհատույց հանձնվելու է ՀՀ Արագածոտնի մարզի առանձին դպրոցներին՝ 18 սեղան և 18 աթոռ (օգտագործված) հանձնվելու են Ջամշլուի հիմնական դպրոցին, 15 սեղան և 15 աթոռ (օգտագործված)՝ Սիփանի միջն. դպրոցին, իսկ մնացած 37 սեղան և 27 աթոռը (օգտագործված) կմնա Ուջանի միջնակարգ դպրոցին:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի «Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ     Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 131 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**
(«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 11-ի N 3/3.8-2/1816-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 6-ի N ԴԴ/22/926-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1406-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղեր՝ 95 տեղ, 1,212.25 կգ ընդհանուր քաշով, 51,858.54 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 132 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-633-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 12-ի N 3/3.8-1/1882-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 13-ի N ԴԴ/22/1253-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1409-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ու ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Գերակայող հիվանդությունների (ՏԲ-ի) բուժման համար նախատեսված դեղերի ռացիոնալ կիրառմանը նպաստող» ծրագրի մասին» N Մ-633-Ա որոշմամբ հաստատված ենթադրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հելթմեդիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00115284) 2014 թվականի հունվարի 21-ին կնքված N ԴԲՏՓԿ/ՀՄ-18/2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծառայությունների մատուցում՝ 753,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ - 133 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ» ԾՆՆԴԱՏՈՒՆ» ՓԲԸ-Ի ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 3/3.8-2/2071-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 4-ի N 02/823-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 10-ի N ԴԴ/22/1053-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1420-14 և Երևանի քաղաքապետի 2014 թվականի փետրվարի 11-ի N 02/16-6745հ եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 21,275,700 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևանի «Սուրբ Աստվածածին» ծննդատուն» ՓԲԸ-ի վարչական մասնաշենքի տանիքի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «N 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08404037) 2014 թվականի հունվարի 22-ին կնքված N ՀՀ/Տ-01/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում, 20,955,700 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հազարաշեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01816381) 2014 թվականի հունվարի 22-ին կնքված N ՀՀ-01/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողություն՝ 120,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Մոդեռննախագիծ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00080732) 2014 թվականի հունվարի 22-ին կնքված N ՀՀՏՀ-01/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ 200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«05» հունվարի 2014թ.

Երևանի քաղաքապետարանի «Սուրբ Աստվածածին» ծննդատուն» ՓԲԸ-ի
վարչական մասնաշենքի տանիքի վերակառուցում

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վերակառուցել Երևանի քաղաքապետարանի «Սուրբ Աստվածածին» ծննդատուն» ՓԲԸ-ի վարչական մասնաշենքի տանիքը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ ք. Երևան, առողջապահության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 21.275.700,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Երևանի «Սուրբ Աստվածածին» ծննդատուն» ՓԲԸ-ն: |
| 7. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ հունվարի 22-ից մինչեւ 2014թ. օգոստոսի 22-ը: |



| | | |
|---|---|---|
| 8. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «N1 Շինվարչություն» ԲԲԸ-ի կողմից տանիքի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 20.955.700,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Հազարաշեն» ՍՊԸ-ի կողմից տանիքի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում՝ 120.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Մոդեռննախագիծ» ՍՊԸ-ի կողմից տանիքի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 200.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Առողջապահության նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 փետրվարի 2014 թվականի N Մ - 134 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի փետրվարի 14-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 12-ի N 3/3.8-2/1890-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 02/824-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/ 1421-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 98,555,578 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2014 թվականի հունվարի 24-ին կնքված N ԼՂ-Կ-01/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և դպրոցներում տեղադրում՝ 98,555,578 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«05» փետրվարի 2014թ.

« Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների կահավորում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացված պահանջարկի համաձայն ապահովել Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցները անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղ, կրթության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 98.555.578,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցները |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ հունվարի 24-ից մինչեւ 2014թ. սեպտեմբերի 01-ը: |



| | | |
|---|---|---|
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՍՄ» ՍՊԸ-ի կողմից ԼՂՀ կրթության և գիտության նախարարության պահանջարկի համապատասխան և ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն՝ գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 98.555.578,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինե Ղարբինյանը

*Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների հանրակրթական դպրոցների համար*

*թիվ ԼՂ-Կ-01/14*

*ԳՈՒՅՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԳՆՄԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՒ ՏԵՂԱԴՐՄԱՆ Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր*

*Հավելված թիվ 1*

| № | Ապրանքի անվանումը | Գին | քան. | գում. | քան. | գում. | քան. | գում. | քան. | գում. | քան. | գում. | քան. | գում. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Աշ. սեղան /1-4դ./ | 24,300 | 34 | 826,200 | 50 | 1,215,000 | 62 | 1,506,600 | | | 30 | 729,000 | 176 | [illegible] |
| 2 | Աշ. աթոռ /1-4դ./ | 10,500 | 68 | 714,000 | 100 | 1,050,000 | 124 | 1,302,000 | | | 60 | [illegible] | 352 | [illegible] |
| 3 | Աշ. սեղան /5-9դ./ | 25,430 | 28 | 712,040 | 112 | 2,848,160 | 67 | [illegible] | | | 30 | [illegible] | 237 | [illegible] |
| 4 | Աշ. աթոռ /5-9դ./ | 11,000 | 56 | 616,000 | 224 | [illegible] | 134 | [illegible] | | | 60 | [illegible] | 474 | [illegible] |
| 5 | Աշ. սեղան /10-12դ./ | 26,800 | 52 | 1,393,600 | 149 | [illegible] | 124 | 3,323,200 | | | 45 | [illegible] | 370 | [illegible] |
| 6 | Աշ. աթոռ /10-12դ./ | 11,600 | 104 | 1,206,400 | 298 | [illegible] | 248 | [illegible] | | | 90 | [illegible] | 740 | [illegible] |
| 7 | Կախիչ | 24.400 | 5 | 122,000 | 56 | 1,366,400 | 35 | 854,000 | | | 12 | 292,800 | 108 | 2,635,200 |
| 8 | Ուսուցչի սեղան /գրասեղան/ | 46 200 | 17 | 785,400 | 159 | 7,345,800 | 36 | 1,663,200 | 23 | 1,062,600 | 25 | [illegible] | 260 | [illegible] |
| 9 | Փափուկ աթոռ | 15.500 | 85 | 1,317,500 | 347 | 5,378,500 | 85 | 1,317,500 | 50 | [illegible] | 80 | [illegible] | 647 | [illegible] |
| 10 | Գրատախտակ 1.5մ*1մ | 91.768 | 8 | 734,144 | 38 | [illegible] | | | | | 5 | [illegible] | 51 | [illegible] |
| 11 | Մատյանների պահարան | 95.000 | | | 13 | 1,235,000 | | | 1 | 95,000 | 2 | [illegible] | 16 | 1,520,000 |
| 12 | Նախրուստոր պահարան | 85 000 | | | | | | | 8 | 680,000 | | | 8 | 680,000 |
| 13 | Բազկաթոռ համակարգչի | 30 000 | | | 51 | 1,530,000 | 35 | 1,050,000 | 4 | 120,000 | | | 90 | 2,700,000 |
| 14 | Պահարան /գաս./ | 61.500 | | | | | 32 | 1,968,000 | 16 | 984,000 | 30 | 1,845,000 | 78 | 4,797,000 |
| 15 | Գրապահարան /գրադարանի/ | 58,000 | 29 | 1,682,000 | 137 | 7,946,000 | | | | | 10 | 580,000 | 176 | 10,208,000 |
| 16 | Համակարգիչների սեղան | 34,000 | | | 32 | 1,088,000 | 35 | 1,190,000 | 8 | 272,000 | | | 75 | 2,550,000 |
| 17 | Կահույք տնօրենի սենյակի* | 477.000 | 3 | [illegible] | | | | | | | | | 3 | [illegible] |
| 18 | Տեղափոխում | 380.000 | 3 | [illegible] | 9 | [illegible] | 4 | 1,520,000 | 1 | 380,000 | 3 | [illegible] | 20 | [illegible] |
| | Ընդամենը | | | [illegible] | | [illegible] | | 23,749,110 | | [illegible] | | [illegible] | | [illegible] |

Ընդամենը՝ 98.555.578,00 (Իննսունութ միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր յոթանասունութ ) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի:

«Գնորդ»

«Հայաստան» համահայկական հիմնադրամ
ՀՀ ք. Երևան Կառավարական 3-րդ մասնաշենք
Հայաստանի Կենտրոնական բանկ
Հ/Հ 103003215672
ՀՎՀՀ 02507456

Արա Վարդանյան
Գործադիր տնօրեն

_______________ ստորագրություն կ.տ.

«Վաճառող»

«ՀԱՏՄ» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, Մայիսյանի Արդյունաբերական հանգույց
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» Գյումրու մասնաճյուղ
Հ/Հ 205012200650
ՀՎՀՀ 05500145

Ավետիք Հարությունյան
Տնօրեն

_______________ ստորագրություն



Ա. Վարդանյան
ՀՀՀ-ի Գործադիր տնօրեն

Ա. Հարությունյան
«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի տնօրեն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ - 135 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՂԲՅՈՒՐ, ԽԱՆՑՔ ԵՎ ՆՈՐ ՄԱՐԱՂԱ ԳՅՈՒՂԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 3/3.8-2/2039-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 02/825-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1424 -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 23,110,300 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ակնաղբյուր, Խանցք և Նոր Մարաղա համայնքային կենտրոնների կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀԱՍՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2014 թվականի փետրվարի 5-ին կնքված N ԼՂ-Կ-02/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում Ակնաղբյուր գյուղի համայնքային կենտրոնում՝ 7,609,700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀԱՍՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2014 թվականի փետրվարի 5-ին կնքված N ԼՂ-Կ-04/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում Խանցք գյուղի համայնքային կենտրոնում՝ 8,584,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՀԱՍՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2014 թվականի փետրվարի 5-ին կնքված N ԼՂ-Կ-03/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում Խանցք գյուղի համայնքային կենտրոնում՝ 6,916,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«06» փետրվարի 2014թ.

« Լեռնային Ղարաբաղի Ակնաղբյուր, Խանցք և Նոր Մարաղա գյուղերի
համայնքային կենտրոնների կահավորում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Կահավորել ԼՂՀ Հադրութի շրջանի Ակնաղբյուր, Ասկերանի շրջանի Խանցք և Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա գյուղերի համայնքային կենտրոնները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղ, սոցիալական բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 23.110.300,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Ակնաղբյուր, Ասկերանի շրջանի Խանցք և Մարտակերտի շրջանի Նոր Մարաղա գյուղերի համայնքները |
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ փետրվարի |



| | | |
|---|---|---|
| | | 05-ից մինչեւ 2014թ. մայիսի 05-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերի թիվ 1 հավելվածների ցանկերի համաձայն՝ գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝<br><br>Ակնաղբյուր՝ 7.609.700,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի,<br><br>Խանցք՝ 8.584.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի,<br><br>Նոր Մարաղա՝ 6.916.600,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 136 -Ա**
**քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 11-ի N 3/3.8-2/1770-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 11-ի N 02/758-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի փետրվարի 11-ի N ՖԲ/ԱնՄ-4/692-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1408-14 եզրակացությունները,* ***ո ր ո -շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 7,349,000 դրամ արժողությամբ «Ավտոմեքենա Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի համար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Մոլտի Մոթորս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02589075) 2014 թվականի փետրվարի 3-ին կնքված N 03/02/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ԳԱԶ 322132-206 մակնիշի (նույնականացման համարը՝ X96322132D0766184) ավտոմեքենայի ձեռքբերում՝ 7,349,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի, Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի ________ կողմից
«4» փետրվարի 2014թ

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2014 թ. իրականացվող «Ավտոմեքենա Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի համար»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագիրը նպատակն է Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի համար գնել Գազել մակնիշի մարդատար ավտոմեքենա, որով կկազմակերպվի դպրոցում ուսանող մտավոր և ֆիզիկական թերություններով երեխաների փոխադրումը գյուղական բնակավայրերից դպրոց և հակառակը՝ Գեղարքունիքի մարզի հատուկ կարիքներով երեխաների համար ապահովելով մատչելի կրթություն: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ:<br>Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 7 349 000 ՀՀ դրամ:<br>Որից՝ ԳԱԶԵԼ ավտոմեքենայի արժեք 7 349 000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի 61 սաները, որոնք ունեն մտավոր և ֆիզիկական պաթոլոգիաներ, բնակվում են մարզի տարբեր համայնքներում և սերում սոցիալապես անապահով ընտանիքներից: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.03.2014 – 31.12.2018 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Գազել մակնիշի մարդատար ավտոմեքենաի ձեռքբերում (փետրվար 2014)՝ 7349000 ՀՀ դրամ: |
| | | Դպրոցի տնօրինության հետ համագործակցության համաձայնագրի կնքում մեքենանան միմիայն դպրոցի կարիքների համար ծառայեցնելու նպատակով: Մեքենայի շահագործման պարբերական վերահսկում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք գնվելիք նոր ԳԱԶ՝ 322132-206 Գազել մակնիշի (VIN code X96322132D0766184) ավտոմեքենայի համար ԱԱՀ-ից ազատում 7349000 դրամի չափով՝ պայմանագիր կնքված 03.02.2014թ. «Մուլտի Մոթորս» ՍՊԸ-ի (ՀՀ, Կոտայքի մ., գ. Առինջ, Երևան-Սևան մայրուղու աջակողմյան հատված, ՀՎՀՀ 02589075) և Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝<br>1. ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի<br>2. ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության,<br>3. ՀՀ գիտության և կրթության նախարարության,<br>4. Գեղարքունիքի մարզի մարզպետարանի կրթության վարչության հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 փետրվարի 2014 թվականի N Մ- 137 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի փետրվարի 14-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 14-ի N 3/3.8-2/2151-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի փետրվարի 13-ի N ՖԲ/ԱնՄ-4/776-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1491-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից Միացյալ հայկական հիմնադրամի կողմից Հայ օգնության միության հասցեով ստացված սպորտային կոշիկների (16 տեղ, 2086 զույգ, 2620 կգ ընդհանուր քաշով, 93,153.58 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 5200 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:
2. Հայ օգնության միությանը՝ բեռի բաշխումից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Տավուշի, Վայոց ձորի, Շիրակի, Կոտայքի, Գեղարքունիքի ու Սյունիքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## *Բեռների բաշխման ցանկ*

Սպորտային կոշիկներ

| N | ՅՕՄ-ի Յայաստանի Մասնաճյուղեր | զույգ | արժեք /ԱՄՆ դոլար/ | N | Մասնաճյուղեր | զույգ | արժեք /ԱՄՆ դոլար/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ | | | | ԼՈՌՈՒ ՄԱՐԶ | | |
| 1 | Բաղրամյան | *30* | 1339.69 | 25 | Վանաձոր | *30* | 1339.69 |
| 2 | Էջմիածին | *30* | 1339.69 | 26 | Ալավերդի | *30* | 1339.69 |
| 3 | Արմավիր | *30* | 1339.69 | | | | |
| | | | | | | | |
| | ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ | | | | ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ | | |
| 4 | Մարալիկ | *30* | 1339.69 | 27 | Իջևան | *30* | 1339.69 |
| 5 | Ախուրյան | *30* | 1339.69 | 28 | Դիլիջան | *30* | 1339.69 |
| 6 | Գյումրի | *30* | 1339.69 | 29 | Տավուշ (Բերդ) | *30* | 1339.69 |
| 7 | Աշոցք | *30* | 1339.69 | 30 | Նոյեմբերյան | *30* | 1339.69 |
| | | | | 31 | Ջուջևան | *30* | 1339.69 |
| | ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ | | | | ՎԱՅՈՑ ՁՈՐ | | |
| 8 | Աբովյան | *30* | 1339.69 | 32 | Վայք | *30* | 1339.69 |
| 9 | Չարենցավան | *30* | 1339.69 | 33 | Եղեգնաձոր | *30* | 1339.69 |
| 10 | Յրազդան | *30* | 1339.69 | 34 | Ջերմուկ | *30* | 1339.69 |
| 11 | Գառնի | *30* | 1339.69 | 35 | Արենի | *30* | 1339.69 |
| 12 | Պռոշյան /նախ. խումբ./ | *30* | 1339.69 | | | | |
| | | | | | | | |
| | ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ | | | | ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ | | |
| 13 | Գավառ | *30* | 1339.69 | 36 | Սիսիան | *30* | 1339.69 |
| 14 | Մարտունի | *30* | 1339.69 | 37 | Գորիս | *30* | 1339.69 |
| 15 | Սևան | *30* | 1339.69 | 38 | Կապան | *30* | 1339.69 |
| 16 | Վարդենիս | *30* | 1339.69 | 39 | Քաջարան | *30* | 1339.69 |
| 17 | Ճամբարակ | *30* | 1339.69 | | | | |
| | ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ | | | | ՀՕՄ-Ի ՄԻԱՎՈՐՆԵՐ | | |
| 18 | Վեդի | *30* | 1339.69 | 40 | ՅՕՄ-ի Արցախի միավոր | 300 | 13396.95 |
| 19 | Մասիս | *30* | 1339.69 | 41 | ՅՕՄ-ի Ջավախքի միավոր | 300 | 13396.95 |
| 20 | Արտաշատ | *30* | 1339.69 | | | | |
| 21 | Արարատ /նախ. խումբ/ | *30* | 1339.69 | | | | |
| | ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ | | | | | | |
| 22 | Ապարան | *30* | 1339.69 | | | | |
| 23 | Աշտարակ | *30* | 1339.69 | | | | |
| 24 | Քուչակ | *30* | 1339.69 | | | | |

| N | | զույգ | արժեք /ԱՄՆ դոլար/ |
|---|---|---|---|
| 42 | Երևանի սոցիալապես անապահով ընտանիքներին և հաշմանդամ ազատամարտիկներին | 316 | 14111.77 |

| | | |
|---|---|---|
| Ընդամենը | 2086 | 93153.58 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2014 թվականի N Մ- 138 -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 11-ի N 3/3.8-2/1825-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 6-ի N ԴԴ/22/960-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1407-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի Էլեոնորեն հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված լաբորատոր ախտորոշիչ սարքի բաղադրամասը (1 տեղ, 1 կգ ընդհանուր քաշով, 405 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 250 եվրո, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 փետրվարի 2014 թվականի N Մ- 139 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի փետրվարի 14-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 2**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 12-ի N 3/3.8-2/1889-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի փետրվարի 6-ի N ԴԴ/22/964-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 18-ի N ՎՄ/3-4/1843-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի մանկական համալսարանական հիվանդանոցի պրոֆեսոր Մարկուս Վեյսի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բժշկական պարագաները (1 տեղ, 3.8 կգ ընդհանուր քաշով, 100 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 60 շվ. ֆրանկ, ՄՓԵւՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 փետրվարի 2014 թվականի N Մ - 140 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N Մ-1052-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 14-ի N 3/3.8-2/2153-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1428-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի Անուշավան Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական դպրոցի պարասրահի հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-1052-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վահագ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08909901) 2013 թվականի նոյեմբերի 30-ին կնքված N ՀՀ/ԴՊ-01/13 պայմանագրում (2014 թվականի հունվարի 29-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 6,607,374 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2014 թվականի N Մ - 141 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 12-ի N 3/3.8-2/1980-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11 -ի N ՎՄ/3-4/1422-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ*** *է.*

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգոր-ծական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-607-Ա, նոյեմբերի 15-ի N Մ-1060-Ա, դեկտեմբերի 6-ի N Մ-1172-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1246-Ա և 2014 թվականի փետրվարի 14 N Մ-122 -Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Եվրոստան-Ոյուտ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01537756) հետ 2014 թվականի փետրվարի 1-ին կնքված N 02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղապլաստե և ալյումինե դռների, պատուհանների և փտրաժների պատրաստում և տեղադրում՝ 6,471,726 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 փետրվարի 2014 թվականի N Մ - 142 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 2**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 14-ի N 3/3.8-2/2154-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 11-ի N ՎՄ/3-4/1429-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգոր-ծական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-607-Ա, նոյեմբերի 15-ի N Մ-1060-Ա, դեկտեմբերի 6-ի N Մ-1172-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1246-Ա և 2014 թվականի փետրվարի 14 N Մ-122 -Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) հետ 2014 թվականի փետրվարի 1-ին կնքված N 3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում նկարագրված աշխատանքների իրականացում՝ 10,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**17 փետրվարի 2014 թվականի N Մ - 143 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի փետրվարի 14-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N Մ-218-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 3**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 17-ի N 3/3.8-2/2201-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 13-ի N ՎՄ/3-4/1643-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգոր-ծական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (3-րդ փուլ)» N Մ-218-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-607-Ա, նոյեմբերի 15-ի N Մ-1060-Ա, դեկտեմբերի 6-ի N Մ-1172-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1246-Ա և 2014 թվականի փետրվարի 14 N Մ-122 -Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Կոմֆորտ Ռ և Վ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00048483) հետ 2014 թվականի փետրվարի 7-ին կնքված N 04/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կերամագրանիտե սալերի մատակարարում՝ 3,458,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ- 144 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 3/3.8-2/2072-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի 11-ի N ՎՄ/3-4/1425-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա, 2012 թվականի նոյեմբերի 15-ի N Մ-919-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սոնա և Արա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00054623) 2014 թվականի փետրվարի 5-ին կնքված N 1-2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Արաբկիր» ԲՀ-ԵԴՄԻ Ապարանի վերականգնողական առողջարանային կենտրոնի բացօթյա ճաշարանի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 7,767,937 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 փետրվարի 2014 թվականի N Մ-145 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N Մ-019-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի տնօրենի 2014 թվականի փետրվարի 13-ի N 01-ԱՀ-14 գրությունը,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)» N Մ-019-Ա որոշման 1-ին կետում «4,533 կգ ընդհանուր քաշով» բառերը փոխարինել «4,700 կգ ընդհանուր քաշով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 փետրվարի 2014 թվականի N Մ- 146 -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի փետրվարի 19-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հասցեով ստացված LAND ROVER DEFENDER մակնիշի ավտոմեքենան (2001 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ SALLDHM582A627311, 13,000 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան ծրագրի մասին» N Մ-1173-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 փետրվարի 2014 թվականի N Մ - 147 - Ա**
**քաղ. Երևան**
**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի փետրվարի 14-ին)**

**«ՀԱՅ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունվարի 24-ի N 3.8-1/913-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 24-ի N 02/1091-14, Հայաստանի Հանրապետության գիտության և կրթության նախարարության 2014 թվականի հունվարի 24-ի N 04/07-1/627-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունվարի 24-ի N ՎՄ/3-4/729-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Հայ կրթություն» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 21,141,000 դրամ ընդհանուր արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայ կրթություն» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01828432) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ 2008 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված N 090051900108 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարման աշխատանքներ՝ 3,375,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արմենտել» ՀՁ ՓԲԸ-ի հետ 2004 թվականի մարտի 22-ին կնքված N 010164538 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կապի ապահովման աշխատանքներ՝ 256,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ինտեր սքոպ քոնսեքթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00452144) 2012 թվականի օգոստոսի 27-ին կնքված N #1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծառայության մատուցման աշխատանքներ՝ 400,500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00402063) 2013 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեռատիզացիայի աշխատանքների կատարում՝ 60,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Տիսա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 90032661) 2013 թվականի հունվարի 8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մատակարարման աշխատանքներ՝ 142,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Արաքս» թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04710526) 2013 թվականի հունվարի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մատակարարման աշխատանքներ՝ 285,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01815543) 2013 թվականի հուլիսի 31-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մատակարարման աշխատանքներ՝ 420,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Միրաժ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01817986) 2013 թվականի հուլիսի 31-ին կնքված N 4 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մատակարարման աշխատանքներ՝ 2,445,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Վիամիր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03015191) 2013 թվականի օգոստոսի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կատարել տպագրական աշխատանքներ՝ 100,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Ամարաս Յուս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00837047) 2013 թվականի հունվարի 8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մատակարարման աշխատանքներ՝ 475,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

11) Ա/Ձ Վազգեն Ամիրխանյանի հետ (ՀՎՀՀ՝ 35012644) 2013 թվականի հուլիսի 31-ին կնքված N 5 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մատակարարման աշխատանքներ՝ 442,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

12) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351 ) 2009 թվականի մարտի 27-ին կնքված N 5-14-51 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման աշխատանքներ՝ 185,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայ կրթություն» կրթական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գիտության և կրթության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Հաստատված է՝
"Հայ Կրթություն" կրթական հիմնադրամի
Տնօրեն՝ Հ. Գեղամյանի կողմից
«10» Փետրվարի, 2014թվ

# ՀԱՅ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կրթել և դաստիարակել երեխաներին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Ծրագրի շրջանակներում ակնկալում ենք օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն, ԱՄՆ, Նյու Ջերսի, Փարամուս, 31 Ուեսթ Սենչուրի Րոուդ - |
| 4. | Ծրագիրը կատարողը | " Հայ Կրթություն" կրթական հիմնադրամ<br>«Հայ կրթություն» կրթական հիմնադրամը սկսել է իր գործունեությունը 2000թ. հոկտեմբերի 2-ից, համաձայն ՀՀ Հիմնադրամի պետական գրանցման թիվ 120 վկայականի և հիմք ընդունելով ՀՀ ԿԳՆ «Լիցենզավորման և հավատարմագրման ծառայության» գործակալության թիվ 438 և 439 հրամանները, լիցենզավորված կրթական ծրագրերի և մասնագիտությունների 05.02.01թ. թիվ 052 լիցենզիա |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը , բնագավառը | ՀՀ, Երևան , ՀԱ Ա -1 թղ. Օգանովի 20<br>Բնագավառը՝ կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն 2014-2015 թվականի համար կազմում է 10.570.500(տաս միլիոն հինգհարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր) դրամ<br>Ծրագրի բյուջեն 2015-2016 թվականի համար կազմում է 10.570.500(տաս միլիոն հինգհարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր) դրամ<br>Ծրագրի բյուջեն 2 տարվա համար կազմում է 21.141.000 քսանմեկ միլիոն հարյուր քառասունմեկ հազար դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացողներ են հանդիսանում Հարավ արևմտյան թաղամասերի երեխաները: Երեխաների ընտրության մեջ նախապատվությունը տրվում է սոցիալապես անապահով բազմազավակ, զոհված ազատամարտիկների և սոցիալական ծառայությունների կողմից հաշվառման վերցված ընտանիքների երեխաներին, քանի որ դպրոցը անհատույց հոգում է գրենական պիտույքների, դասագրքերի,սննդի, միջոցառումների համար հագուստների , ձեռքի աշխատանքի համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերման բոլոր ծախսերը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2014թվ. – 01.01.2016թվ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Հայ կրթություն» կրթական հիմնադրամը անհատույց իրականացնում է համալիր կրթական ծրագիր՝ նախադպրոցական և միջնակարգ կրթություն:<br>Նախադպրոցական ծրագիրը իր մեջ ներառում է երեք տարիքային խմբեր՝ 3-5 տարեկան, յուրաքանչյուր խմբում 25 երեխա, և առաջնորդվում է ՀՀ ԿԳՆ նախադպրոցական ծրագրերով:<br>Մանկապարտեզ հաճախող 75 երեխաները օրական 3 անգամ անվճար սնվում են մանկապարտեզում:<br>Դպրոցական ծրագիրը նույնպես աշխատում է ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված ծրագրերով, իսկ հավելյալ ուսումնասիրվող ծրագրերը հաստատվում են լեզվի բարեփոխումների կենտրոնում:<br>Կրթահամալիրը ապահովում է նախադպրոցական և հիմնական կրթություն (I- ից IX – րդ դասարաններ), որտեղ հաճախում են 195 երեխաներ: Դպրոց հաճախող երեխաները օրական 1 անգամ (նախաճաշիկ) անվճար սնվում են դպրոցում:<br>Դպրոցը գործում է շաբաթական 5 օր և տարեկան 9 ամիս:<br>Ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ միջոցների ծավալը՝<br><u>Սննդի ձեռքբերում – (</u> Նախատեսված մանկապարտեզի և դպրոցի համար)<br>"Ամարաս Յուս" ՍՊԸ – մոտ 475.000 չորս հարյուր յոթանասունհինգ հազար դրամ :<br>" Միրաժ" ՍՊԸ – մոտ 2.175.000 երկու միլիոն հարյուր յոթանասունհինգ հազար դրամ :<br>"Դուստր Մարիաննա" ՍՊԸ - մոտ 420.000 չորս հարյուր քսան հազար դրամ :<br>"Արաքս" թռչնաֆաբրիկա ՓԲԸ – մոտ 285.000 երկու հարյուր ութսունհինգ հազար դրամ :<br><u>Տնտ. ապրանքների ձեռքբերում</u> -<br>" Միրաժ" ՍՊԸ – մոտ 270.000 երկու հարյուր յոթանասուն հազար դրամ :<br>" ՏԻՍԱ" ՓԲԸ – մոտ 142.000 հարյուր քառասուներկու հազար դրամ :<br><u>Գրենական պիտույքների ձեռքբերում</u> -<br>" ԱՁ Վազգեն Ամիրխանյան" – մոտ 442.000 չորս հարյուր քառասուներկու հազար դրամ:<br>"ՎԻԱՄԻՐ" ՍՊԸ-մոտ 100.000 հարյուր հազար դրամ:<br><br>"Հայաստանի էլ.ցանցեր"ՓԲԸ - 3.375.000 երեք միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ:<br>Ջրմուղ- կոյուղի ՓԲԸ - մոտ 185.000 հարյուր ութսունհինգ հազար դրամ:<br>Դեռատիզացիա - 60.000 վաթսուն հազար դրամ:<br>Աղբահանություն – 120.000 հարյուր քսան հազար դրամ:<br>Արմենտել ՀՁ ՍՊԸ –256.000 երկու հարյուր հիսունվեց հազար դրամ:<br>Օնլայն պլյուս ՍՊԸ - մոտ 50.000 հիսուն հազար դրամ:<br>"Ինտեր Սքուլ Քոննեթ" ՍՊԸ-400.500 չորս հարյուր հազար հինգհարյուր դրամ :<br>EMAIL – – մոտ 145.000 հարյուր քառասունհինգ հազար դրամ:<br><u>Գույքի ձեռքբերում</u> Նախատեսված մանկապարտեզի և դպրոցի համար) - մոտ 800.000 ութ հարյուր հազար դրամ:<br><u>Սպիտակեղենի ձեռքբերում</u> Նախատեսված մանկապարտեզի համար) – մոտ 320.000 երեք հարյուր քսան հազար դրամ:<br><u>Նորոգության ծախսեր</u> Նախատեսված մանկապարտեզի և դպրոցի համար)– 550.000հինգ հարյուր հիսուն հազար դրամի չափով:<br>Վերոհիշյալ գումարները հաշվարկված են առանց ԱԱՀ-ի և 1 տարվա կտրվածքով: |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող ներմուծվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Սնունդ - 3.355 000 (երեք միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար ) դրամ առանց ԱԱՀ – պայմանագրերը կներկայացվեն առանձին՝ հարակից գործարքներով:<br><br>"Հայաստանի էլ. ցանցեր" ՓԲԸ -3.375.000 երեք միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ:<br>Ջրմուղ- կոյուղի ՊԲԸ - մոտ 185.000 հարյուր ութսունհինգհազար դրամ:<br>Արմենտել ՀՁ ՍՊԸ –256.000 երկու հարյուր հիսունվեց հազար դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված Կազմակերպչական ծախսեր նախատեսվում են ընդհանուր բյուջեի 15 տոկոսի չափով:<br>Դեռատիզացիա - 60.000 վաթսուն հազար դրամ:<br>Աղբահանություն – 120.000 հարյուր քսան հազար դրամ:<br>Օնլայն պլյուս ՍՊԸ - մոտ 50.000 հիսուն հազար դրամ:<br>"Ինտեր Սբուլ Քոնեք" ՍՊԸ-400.500 չորս հարյուր հազար հինգհարյուր դրամ:<br>EMAIL – – մոտ 145000 հարյուր քառասունհինգ հազար դրամ:<br>Կազմակերպական ծախսերը 1 տարվա կտրվածքով կազմում է 375.000 երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | • ՀՀ Կրթության և Գիտության Նախարարություն<br>• Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի մ/ճ<br>• UMCOR<br>• Ջինիշյան հիշատակի հիմնադրամ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունն իրականացվում է Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության կողմից, ՀՀ Կրթության և Գիտության Նախարարություն և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով են ներկայացվում համապատասխան հաշվետվություններ: |